



ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2025 թվականի հունվարի 23-ի
թիվ N 20-Լ հրամանի

2025 ԹՎԱԿԱՆԻ

ՊՖԿ ռազմավարական
գործողությունների ծրագիր

ՀՈՒՆՎԱՐ 2025
ԵՐԵՎԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Պետական ֆինանսների կառավարման 2025 թվականի ռազմավարական գործողությունների ծրագրի կազմման հիմք են հանդիսանում՝

ՀՀ կառավարության 18 նոյեմբերի 2021 թվականի N 1902-Լ որոշմամբ հաստատված կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը,

ՀՀ կառավարության 18 նոյեմբերի 2021 թվականի N 1902-Լ որոշմամբ հաստատված 2021-2026թթ. ծրագրի «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն», «6.9 Հարկային և մաքսային վարչարարություն», «6.10 Պետական ծախսեր» բաժիններով սահմանված նպատակների իրագործման համար ստանձնած հանձնառությունները,

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով ֆինանսների նախարարության իրավասությանը վերապահված ոլորտներում նախարարության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված նպատակների և խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ծրագիրն ուղղված է վերոնշյալ, նաև այլ ռազմավարական փաստաթղթերով, օրենքներով, միջազգային պարտավորություններով սահմանված նպատակների թիրախային ցուցանիշներին հասնելուն:

ՊՖԿ 2025 ռազմավարական գործողությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները՝

1. Մակրոտնտեսական քաղաքականություն
2. Հարկային քաղաքականություն
3. Բյուջետային գործընթաց
4. Բյուջետային ծրագրերի գնահատում
5. Պետական պարտքի կառավարում
6. Գանձապետական գործառույթ
7. Գնումների քաղաքականություն
8. Հանրային ներդրումների կառավարում
9. Ներքին աուդիտ
10. Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
11. Սպեցիֆիկ ֆիսկալ ռիսկերի կառավարում
12. Թվայնացում/ԿՖԿՏՀ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՊՖԿ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ: ԱՄՓՈՓ

31 գործողություն, 44 արդյունքային ցուցանիշ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
1	ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
1.1	ՀՆԱ ծախսային բաղադրիչների և տնտեսության ճյուղերի կանխատեսման նոր համակարգի մշակում:	R ծրագրային միջավայրում կառուցված ավտոմատ համակարգ	Համակարգի առկայություն և կիրառություն պետական բյուջեի ուղերձում, տնտեսական աճի ծախսային և տնտեսության ճյուղերի կանխատեսումներում:	2025թ., 2-րդ կիսամյակ
1.2	Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելային նոր համակարգի մշակում:	R ծրագրային միջավայրում կառուցված համակարգ՝ Բայեսյան վեկտոր - ավտոռեգրեսիոն մոդելներով	Համակարգի առկայություն և կիրառություն ՄԺԾԾ-ում և պետական բյուջեի ուղերձում: Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատված են նոր համակարգով:	2025թ., 2-րդ կիսամյակ
1.3	ՀՀ կառավարության պարտքի կայունության գնահատում նոր՝ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար սուվերեն ռիսկի և պարտքի կառավարման շրջանակի (ԱՄՀ և ՀԲ կողմից մշակված) ներդրում:	Աշխատանքային փաստաթուղթ (working paper)	Շուկային հասանելիություն ունեցող երկրների համար սուվերեն ռիսկի և պարտքի կառավարման շրջանակով (ԱՄՀ և ՀԲ կողմից մշակված) ՀՀ պարտքի կայունության գնահատումներն արտացոլող աշխատանքային փաստաթուղթը հրապարակված է ՀՀ ՖՆ կայքում:	2025թ., 2-րդ կիսամյակ
1.4	Մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (semi-structural gap/SSGM) մշակում և ներդրում	MatLab ծրագրային միջավայրում կառուցված մոդելային համակարգ	Եռամսյակային կանխատեսման մոդելի (Quarterly Projection Model, QPM) առկայություն և կիրառում բյուջետային գործընթացում իրականացվող մակրոտնտեսական կանխատեսումներում:	2025թ., 2-րդ կիսամյակ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
2 ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ				
2.1	Հարկային քաղաքականության հայեցակարգի մշակում:	Հայեցակարգ	Հարկային քաղաքականության հայեցակարգը մշակված և ներկայացված է քննարկման Կառավարություն:	2025թ., 1-ին կիսամյակ
2.2	ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխանեցում հայեցակարգին:	Օրենքի նախագծի մշակման ծրագիր	Հարկային հայեցակարգից բխող փոփոխությունները Հարկային օրենսգրքում ինտեգրելու ծրագիր:	2025թ., 2-րդ կիսամյակ
3 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ				
3.1	Բյուջետային ծախսերի վերաբաշխման գործընթացի կանոնակարգում	Վերաբաշխումների գործընթացը կանոնակարգող վերանայված իրավական ակտ	Վերաբաշխումների գործընթացը կանոնակարգող իրավական ակտը հաստատված է Կառավարության կողմից:	2025թ., 1-ին կիսամյակ
3.2	Բյուջետային ծախսերի առաջնահերթությունների ներկայացման, ինչպես նաև ծախսերի 5% և 10% նվազեցման սցենարների ներկայացման պահանջների ամրագրում մեթոդական ցուցումներում:	Վերանայված մեթոդական ցուցումներ	Մեթոդական ցուցումները պարունակում են պետական մարմինների կողմից բյուջետային ծախսերի առաջնահերթությունների ներկայացման, ինչպես նաև ծախսերի 5% և 10% նվազեցման սցենարների ներկայացման պահանջներ (ներառյալ ձևաչափերը):	2025թ., 1-ին կիսամյակ
4 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ				
4.1	Պետական բյուջետային ծրագրերի գնահատման համակարգի ստեղծում:	Բյուջետային ծրագրերի գնահատման ընթացակարգ	Բյուջետային ծրագրերի գնահատման ընթացակարգերն առկա են: (Գնահատման մեթոդաբանություն, գնահատման ենթակա ծրագրերի ընտրության մեթոդաբանություն, գնահատման տարեկան ծրագիր):	2025թ., 1-ին կիսամյակ
		Համապատասխան կարողություններով ստորաբաժանում	Բյուջետային ծրագրերի գնահատման պատասխանատու ստորաբաժանումը համալրված է, մասնագետները վերապատրաստված են և ունեն համապատասխան կարողություններ:	2025թ., 1-ին կիսամյակ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
5	ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
5.1	«Պետական պարտքի մասին» օրենքի վերանայում, օրենքում «պետական պարտք» և «կառավարության պարտք» սահմանումների վերանայում:	Օրենքի նախագիծ	«Պետական պարտքի մասին» նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ:	2025թ., 1-ին կիսամյակ
5.2	Պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների հարթակի գործարկում:	Շրջանառության մեջ գտնվող միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի քանակի կրճատում	Փոխանակման աճուրդներն իրականացված են և շրջանառության մեջ գտնվող միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի քանակը 20-ից քիչ է:	2025թ., 2-րդ կիսամյակ
5.3	Գնաճին կցված պարտատոմսերի թողարկում:	Գնաճին կցված պարտատոմսերի թողարկում	Գնաճին կցված պարտատոմսերը թողարկված և տեղաբաշխված են (մեկ պիլոտային թողարկում):	2025թ., 2-րդ կիսամյակ
5.4	Նպատակային պարտատոմսերի տարբերակների մշակման, թողարկման և տեղաբաշխման սցենարների հայեցակարգի մշակում:	Նպատակային պարտատոմսերի թողարկման հայեցակարգ	Նպատակային պարտատոմսերի թողարկման հայեցակարգը մշակված է և ներկայացված է կառավարության քննարկմանը:	2025թ., 1-ին կիսամյակ
6	ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ			
6.1	Գանձապետական գործառույթի ապակենտրոնացում և թվայնացում:	Փոփոխությունների փաթեթ	Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների մեջ փոփոխությունների իրականացման փաթեթը մշակված և ներկայացված է ՀՀ ԱԺ:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Որոշման նախագիծ	Մշակված և ընդունված է ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Փոփոխությունների նախագիծ	Բյուջետային համակարգի մասին օրենքի փոփոխությունները մշակվել և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	2025թ., 1-ին կիսամյակ
		Ծրագրային փաթեթ	Ծրագրային փաթեթը մշակված է:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Հայեցակարգ	«Գանձապետական համակարգի զարգացման տեսլական» հայեցակարգը մշակված և հաստատված է:	2025թ., 1-ին կիսամյակ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
7	ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
7.1	Գնումների մասին օրենքում վերնայումների իրականացում:	Օրենքի փոփոխությունների փաթեթ	Մշակվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթների նախագծերը:	2025թ., 1-ին կիսամյակ
		Օրենքի փոփոխությունների փաթեթ	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթները հաստատված են ԱԺ-ի կողմից:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Ենթաօրենսդրական ակտ	Ենթաօրենսդրական ակտերը մշակված են:	2025թ., 2-րդ կիսամյակ
7.2	Էլեկտրոնային գնումների նոր համակարգի մշակում և ներդրում:	Պայմանագիր ծառայություն մատուցող կողմի հետ	Մշակման ծառայություն մատուցողն ընտրված է:	2025թ., 1-ին կիսամյակ
		Էլեկտրոնային գնումների նոր համակարգ	Համակարգը գործարկված է:	2025թ., 2-րդ կիսամյակ
7.3	Գնումների մասին նոր օրենքի իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում (ներառյալ՝ ՖՆ աջակցող ստորաբաժանումներ և Կառավարության մյուս կառույցներ):	Ստորաբաժանում	ՀՀ գնումների վարչությունում ձևավորված է 2 բաժին:	2025թ., 2-րդ կիսամյակ
8	ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
8.1	Հանրային ներդրումների կառավարման գործառույթի տեղափոխում և ներդրում ՀՀ ֆինանսների նախարարությունում:	ՀՀ վարչապետի որոշում	ՀՀ ֆինանսների նախարարության և Էկոնոմիկայի նախարարության կանոնադրություններում համապատասխան փոփոխություններն իրականացված են:	2025թ., 1-ին կիսամյակ
		ՀՀ կառավարության փոփոխված որոշում	«Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի թիվ 175-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններն իրականացված են:	2025թ., 1-ին կիսամյակ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
9	ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ			
9.1	ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործունեության ստանդարտների վերանայում, ներքին աուդիտի միջազգային ինստիտուտի ստանդարտներին համապատասխանեցում:	ՀՀ Կառավարության որոշում	ՀՀ Կառավարության 2011 թվականի թիվ 1233-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունված է:	2025թ., 1-ին կիսամյակ
9.2	Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացում:	Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման մեթոդաբանություն	«Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատում իրականացնելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Գնահատման հաշվետվություն	Ներքին աուդիտի համակարգ ներդրած Հանրային հատվածի կազմակերպությունների առնվազն 30%-ում իրականացվել է արտաքին գնահատում:	2025թ., 2-րդ կիսամյակ
9.3	Իրականացնել վերլուծություն ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման նպատակահարմարությունը գնահատելու համար:	Գնահատման հաշվետվություն	Գնահատման հաշվետվությունը ներկայացված է, հետագա գործողությունները հստակեցված են:	2025թ., 2-րդ կիսամյակ
9.4	Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացում:	Կարողությունների զարգացման ծրագիր	Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքները և կարողությունները գնահատված են, կարիքները բացահայտված են, զարգացման ծրագիրը հաստատված է:	2025թ., 1-ին կիսամյակ
		Վերապատրաստված ներքին աուդիտորներ	Վերապատրաստում են անցել ՀՀ հանրային հատվածում աշխատող այն որակավորված ներքին աուդիտորները, որոնց համար վերապատրաստման ժամանակահատված է սահմանված 2025թ.:	2025թ., 2-րդ կիսամյակ
9.5	Կենտրոնացված ներդաշնակեցման միավորի անձնակազմի համալրում և կարողությունների զարգացում	Համալրված ստորաբաժանում	ԿՆՄ անձնակազմը համալրված է, առկա են անհրաժեշտ կարողություններ:	2025թ., 1-ին կիսամյակ
10	ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ			
10.1	Հայաստանի Հանրապետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:	Ֆինանսական հաշվետվություն	Պետության մակարդակով ներկայացվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններ:	2025թ., 2-րդ կիսամյակ

No.	Գործողություն	Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետ
11	ՍՊԵՑԻՖԻԿ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
11.1	Պետական մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մշակում:	Իրավական ակտ	Համապատասխան իրավական ակտն ընդունված է:	2025թ., 2-րդ կիսամյակ
11.2	Պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման թվային հարթակի (FERST համակարգի) գործարկում:	Էլեկտրոնային համակարգ	Էլեկտրոնային համակարգը ներդրված և գործարկված է:	2025թ., 1-ին կիսամյակ
11.3	Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման ԱՄՀ նոր գործիքի ներդնում:	Ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր գործիքի	Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքը կիրառվում է:	2025թ., 1-ին կիսամյակ
11.4	Պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման և զսպման գործիքակազմի բարելավումը:	Ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր մոդել	Իրականացված ուսումնասիրության արդյունքներով ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր մոդելը ներդրված է:	2025թ., 2-րդ կիսամյակ
11.5	Բյուջետային վարկերի (ենթավարկերի) և պետական երաշխիքների տրամադրման և ֆիսկալ ռիսկերի գնահատման և զսպման գործիքակազմի բարելավումը	Տվյալների թվային ռեգիստր	Տվյալների թվային ռեսգիստրը առկա է:	2025թ., 2-րդ կիսամյակ
		Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիք	Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքը կիրառվում է:	2025թ., 1-ին կիսամյակ
11.6	Թվով 4 ՊՈԱԿ-ների գործունեության ուսումնասիրությունը և վերլուծություն	Հաշվետվություն	Թվով 4 կամ 4 խումբ պետական ոչ առևտրային կազմակերպություններ ուսումնասիրված են, բարելավման առաջարկությունները ներկայացված են:	2025թ., 2-րդ կիսամյակ
12	ԹՎԱՅՆԱՑՈՒՄ/ԿՖԿՏՀ			
12.1	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) մշակում	Պայմանագիր ծառայություն մատուցող կողմի հետ	ԿՖԿՏՀ-ի մշակման ծառայություն մատուցողն ընտրված է:	2025թ., 1-ին կիսամյակ
		ԿՖԿՏՀ ներդրման ռազմավարություն և իրականացման պլան	ԿՖԿՏՀ-ի ներդրման ռազմավարությունը և իրականացման պլանը ներկայացված է ԿՖԿՏՀ-ի ծրագրային ապահովումը մշակող ընկերության կողմից և ընդունված է պատվիրատուի կողմից:	2025թ., 2-րդ կիսամյակ

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1 ՀՆԱ ծախսային բաղադրիչների և տնտեսության ճյուղերի կանխատեսման նոր համակարգի մշակում:

Նպատակ: Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների համակարգի բարելավում:

Անմիջական արդյունք	R ծրագրային միջավայրում կառուցված ավտոմատ համակարգ
Արդյունքային ցուցանիշ	Համակարգի առկայություն և կիրառություն պետական բյուջեի ուղերձում տնտեսական աճի ծախսային և տնտեսության ճյուղերի կանխատեսումներում:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 36-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: Ներկայումս ՄԺԾԾ և պետական բյուջեի հիմքում դրվող տնտեսական աճի, տնտեսության առաջարկի և պահանջարկի բաղադրիչները վերլուծվում և կանխատեսվում են առանձին մոդելներով, ինչի արդյունքում երբեմն ՀՆԱ-ի կանխատեսումները, ըստ առաջարկի և պահանջարկի առանձին բաղադրիչների, որոշակիորեն շեղվում են իրարից՝ առաջացնելով փորձագիտական դատողությունների և մոտեցումների կիրառման անհրաժեշտություն: Այդ պարագայում դժվարանում է տարբեր ժամանակահատվածներում իրականացված կանխատեսումների միջև կապերի հստակ սահմանումը:

Բացի այդ ՀՆԱ-ի առանձին բաղադրիչների մասով առկա մոդելները սակավ են և դրանցում ներառված գործոնների շրջանակն ունի վերանայման և ընդլայնման կարիք՝ հաշվի առնելով վերջին տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած տնտեսական փոփոխությունները: Հետևաբար, որոշակի խնդիրներ է առաջանում ՀՆԱ-ի առանձին բաղադրիչները կանխատեսելու և դրանց վրա ազդող գործոնների լայն շրջանակ հաշվի առնելու տեսանկյունից, ինչը դժվարացնում և ժամանակատար է դարձնում մակրոտնտեսական կանխատեսումների ներդաշնակեցումը և համադրելիության ապահովումը: Նախատեսվում է ՌԴ ՖՆ գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում ներդնել R ծրագրային միջավայրում կառուցված ՀՆԱ ծախսային բաղադրիչների և տնտեսության ճյուղերի կանխատեսման նոր ավտոմատ համակարգ: Վերջինս հնարավորություն կտա ՀՆԱ-ի առանձին բաղադրիչների համար ունենալ արդիականացված մոդելային համակարգ՝ վերանայված գործոններով և համապատասխանեցված տնտեսական զարգացումներին:

Նոր համակարգի ներդրումն ավելի ամբողջական ու համապարփակ կդարձնի կանխատեսումները՝ նպաստելով դրանց հիմնավորվածության և ճշգրտության բարձրացմանը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Փաստահեն որոշումներով պայմանավորված՝ քաղաքականության որոշումների բարելավում:

1.2 Պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելային նոր համակարգի մշակում:

Նպատակ: Մակրոտնտեսական և հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համակարգի բարելավում:

Անմիջական արդյունք	R ծրագրային միջավայրում կառուցված համակարգ՝ Բայեսյան վեկտոր-ավտոռեգրեսիոն մոդելներով
Արդյունքային ցուցանիշ	Համակարգի առկայություն և կիրառություն ՄԺԾԾ-ում և պետական բյուջեի ուղերձում պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատված է նոր համակարգով:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 36-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: ՀՀ ՖՆ-ը հարկային եկամուտների ռիսկերի բացահայտման համար կիրառում է քանակական գնահատման գործիքակազմ՝ հիմնված Բայեսյան վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի վրա, որը յուրաքանչյուր տարի վերագնահատվում է, ինչպես նաև որոշակի հաճախականությամբ վերանայվում են մոդելի պարամետրերի նախնական արժեքները: Այնուամենայնիվ, մոդելային համակարգի ծրագրային միջավայրը ճկուն չէ, համատեղելիության խնդիրներ է առաջացնում օպերացիոն համակարգերի թարմ տարբերակների հետ:

Ոչ ճկուն և համատեղելիության խնդիրներ ունեցող ծրագրային միջավայրն առաջացնում է համակարգի առօրյա օգտագործման դժվարություններ՝ սահմանափակելով նաև ռիսկերի բացահայտման գործոնների շրջանակի ընդլայնումը:

Նախատեսվում է ՌԴ ՖՆ գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում ներդնել R ծրագրային միջավայրում կառուցված համակարգ Բայեսյան վեկտոր-ավտոռեգրեսիոն մոդելներով:

Արդյունքում ակնկալվում է բարելավել հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համակարգերը, ապահովել գործընթացների շարունակականությունը և գնահատականների ամբողջականությունը, ինչպես նաև բարելավել բյուջետային փաստաթղթերում հարկային եկամուտների ռիսկերի նկարագրության որակը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Փաստահեն որոշումներով պայմանավորված՝ (1) հարկաբյուջետային քաղաքականության որոշումների բարելավում, (2) հարկաբյուջետային կայունության ապահովում:

1.3 ՀՀ կառավարության պարտքի կայունության գնահատում նոր՝ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար սուվերեն ռիսկի և պարտքի կառավարման շրջանակի (ԱՄՀ և ՀԲ կողմից մշակված) ներդրում:

Նպատակ: Հարկաբյուջետային կայունության գնահատման համակարգի բարելավում:

Անմիջական արդյունք	Աշխատանքային փաստաթուղթը (working paper)
Արդյունքային ցուցանիշ	Շուկային հասանելիություն ունեցող երկրների համար սուվերեն ռիսկի և պարտքի կառավարման շրջանակով (ԱՄՀ և ՀԲ կողմից մշակված) ՀՀ պարտքի կայունության գնահատումներն արտացոլող աշխատանքային փաստաթուղթը հրապարակված է ՀՀ ՖՆ կայքում:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 36-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: ԱՄՀ և ՀԲ կողմից 2024թ.-ին շրջանառության մեջ է դրվել կառավարության պարտքի կայունության գնահատման նոր համակարգը՝ գնահատման նորացված շրջանակով: Ներկայումս ՖՆ-ում կիրառվող գործիքակազմը հիմնված է ԱՄՀ կողմից կիրառվող նախկին մեթոդաբանության վրա, ինչը ենթադրում է պարտքի կայունության գնահատում պարտքի շեմերի և սթրես թեստերի իրականացման հիման վրա, մինչդեռ պարտքի կայունության գնահատման առավել արդիական մոտեցումները ենթադրում են ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառում՝ վաղ ազդանշանի համակարգի մոտեցման կիրառմամբ:

Նոր համակարգի ներդրմամբ՝ պարտքի կայունության գնահատման սցենարային վերլուծության գործիքակազմը կհամալրվի ռիսկերի գնահատման նոր, համապարփակ մոտեցումներով՝ արդյունքում բարելավվելով պարտքի կայունության գնահատումների որակը և ընդլայնելով հաշվի առնվող գործոնների շրջանակը:

Ներդրվող գործիքակազմն իր մեջ ամփոփում է աշխարհի մակարդակով պարտքի կայունության գնահատման ուղղությամբ մասնագիտական շրջանակներում կուտակված փորձը և գիտելիքը, ուստի ԱՄՀ և ՀԲ կողմից մշակված համակարգը հնարավորություն կտա հաջողությամբ ապահովել ռիսկերի գնահատման համակարգերի ամբողջականացումը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Փաստահեն որոշումներով պայմանավորված՝ (1) հարկաբյուջետային քաղաքականության որոշումների բարելավում, (2) հարկաբյուջետային կայունության ապահովում:

1.4 Մակրոտնտեսական ցուցանիշների միջնաժամկետ կանխատեսման կիսակառուց-վածքային մոդելի (semi-structural gap/SSGM) մշակում և ներդրում:

Նպատակ: Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների որակի բարելավում:

Անմիջական արդյունք	MatLab ծրագրային միջավայրում կառուցված մոդելային համակարգ
Արդյունքային ցուցանիշ	Եռամսյակային կանխատեսման մոդելի (Quarterly Projection Model, QPM) առկայություն և կիրառում բյուջետային գործընթացում իրականացվող մակրոտնտեսական կանխատեսումներում:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ 36.2 միջոցառում

Հիմնավորում: Այժմ տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրականացվում են առանձին՝ ժամանակակից տնտեսաչափական մոդելների կիրառմամբ, ինչը դժվարեցնում է կանխատեսումների համադրելիությունը և ներդաշնակության ապահովումը:

Բացի այդ տնտեսաչափական մեթոդները առավել արդյունավետ են կարճաժամկետ կանխատեսումների իրականացման համար և հնարավորություն չեն տալիս իրականացնել այլընտրանքային կանխատեսումներ, մինչդեռ ներդրվող կառուցվածքային մոդելը առավել արդյունավետ է միջնաժամկետ կանխատեսումների համար և հնարավորություն է տալիս իրականացնել սցենարային վերլուծություն՝ միասնական համակարգում:

Մակրոտնտեսական ցուցանիշների Եռամսյակային կանխատեսման կիսակառուցվածքային մոդելի (/Semi-Structural Gap Model (SSGM)/) ներդրումը հնարավորություն կտա ունենալ կանխատեսումների մեկ միասնական համակարգ MatLab ծրագրային ապահովման միջավայրում, որը **կապահովի կանխատեսումների ներդաշնակությունը և հնարավորություն կտա առավել արդյունավետ ձևով իրականացնել միջնաժամկետ կանխատեսումներ:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Փաստահեն որոշումներով պայմանավորված՝ (1) հարկաբյուջետային քաղաքականության որոշումների բարելավում, (2) հարկաբյուջետային կայունության ապահովում:

2. ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Հարկային քաղաքականության հայեցակարգի մշակում:

Նպատակ: Կառավարության սահմանած տնտեսական և սոցիալական նպատակների իրագործման համար համապատասխան հարկային միջավայրի ձևավորում:

Անմիջական արդյունք	Հայեցակարգ
Արդյունքային ցուցանիշ	Հարկային քաղաքականության հայեցակարգը մշակված և ներկայացված է քննարկման Կառավարություն:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնում սահմանված հարկային քաղաքականության նպատակներ:

2.2 ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխանեցում հայեցակարգին:

Նպատակ: Կառավարության սահմանած տնտեսական և սոցիալական նպատակների իրագործման համար համապատասխան հարկային միջավայրի ձևավորում:

Անմիջական արդյունք	Օրենքի նախագծի մշակման պլան
Արդյունքային ցուցանիշ	Հարկային հայեցակարգից բխող փոփոխությունները Հարկային օրենսգրքում ներառելու պլան:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնում սահմանված հարկային քաղաքականության նպատակներ:

Հիմնավորում: Հարկային քաղաքականության արդյունավետությունը հարկային համակարգի կարողությունն է՝ նպաստելու, սպասարկելու կառավարության սոցիալ-տնտեսական նպատակների իրագործմանը: ՀՀ տնտեսական հեռանկարային զարգացման տեսլականը, որը պետք է հիմք հանդիսանա արդյունավետ հարկային քաղաքականության վարման համար, ձևակերպված չէ:

Ներկայումս, հարկային քաղաքականության և հարկային օրենսդրության փոփոխությունները հիմնականում ուղղված են ընթացիկ ախտորոշված խնդիրներին տեղայնացված լուծումներ տալուն (հարկումից խուսափելու երևույթներ, անարդար հարկային միջավայր այլն):

Խնդրի լուծման համար նախաձեռնվող տեսլականի քննարկումների արդյունքում, բոլոր շահագրգիռ կողմերի կարծիքներով կձևավորվի ՀՀ տնտեսական հեռանկարային զարգացման տեսլական, որը հիմք կհանդիսանա նաև հարկային

քաղաքականության հայեցակարգ մշակելու և օրենսդրությունը դրան համապատասխանեցնելու համար:

Արդյունքում կձևավորվի տնտեսության զարգացման առաջնահերթություններին ու հնարավորություններին համապատասխան գործող հարկային միջավայր, որը առավելագույնս կսպասարկի պետության տնտեսական նպատակները:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացում, (2) հարկային միջավայրի կայունության և կանխատեսելիության աճ, (3) հարկային համակարգի և ներդրումային միջավայրի նկատմամբ վստահելիության բարձրացում, (4) կայուն տնտեսական զարգացման խթանում, (5) սոցիալական և տնտեսական արդարության արմատաշրջում:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

3.1 Բյուջետային ծախսերի վերաբաշխման գործընթացի կանոնակարգում:

Նպատակ: Ծախսերի վերաբաշխումների ծավալի և քանակի կրճատում, ֆիսկալ կարգապահության բարձրացում:

Անմիջական արդյունք	Վերաբաշխումների գործընթացը կանոնակարգող վերանայված իրավական ակտ
Արդյունքային ցուցանիշ	Վերաբաշխումների գործընթացը կանոնակարգող իրավական ակտը հաստատված է կառավարության կողմից:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.10 Պետական ծախսեր» ենթաբաժնի 1-ին կետով սահմանված նպատակներ:

Հիմնավորում: ՀՀ պետական բյուջեն հաստատվելուց հետո պետական մարմինները տարվա ընթացքում ներկայացնում են բազմաթիվ առաջարկներ իրենց բյուջետային ծրագրերի և միջոցառումների միջև մեծ ծավալի և քանակի վերաբաշխումներ իրականացնելու, ինչպես նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդերից հավելյալ հատկացումներ կատարելու վերաբերյալ:

Արդյունքում բյուջետային տարվա ընթացքում պետական մարմիններն իրականացնում են ծավալուն վերաբաշխումներ՝ հաճախ ոչ սկի տակ դնելով ՀՀ օրենքով ՀՀ կառավարությանը վերաբաշխումների համար թույլատրված առավելագույն 3 տոկոսի շեմը գերազանցելու պահանջի ապահովումը:

Նման մեծածավալ վերաբաշխումները պայմանավորված են մի շարք պատճառներով՝ (1) տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ նախնական ծրագիրը կարող է մասամբ դառնալ ոչ իրագործելի կամ ոչ արդիական, (2) կարող են ի հայտ գալ նոր հանգամանքներ, որոնք կստիպեն միջոցներ հատկացնել այլ չնախատեսված

ուղղություններով, (3) տարվա ընթացքում կարող են ձևավորվել խնայողություններ, որոնք պետական մարմինների կողմից կարող են առաջարկվել ուղղել այլ՝ ոչ առաջնահերթ և չպլանավորված միջոցառումների/ծախսերի իրականացմանը և այլն:

Վերաբաշխումների մեծ ծավալը խոսում է նրա մասին, որ գերատեսչությունները բյուջեի կատարման ընթացքում հաճախ ավելի մեծ ջանքեր են գործադրում չպլանավորված ուղղություններով հավելյալ ծախսերի իրականացման համար, քան արդեն իսկ պլանավորված և բյուջետավորված ծախսերի իրականացման վրա:

Դա իր հերթին կարող է հանգեցնել հաստատված բյուջեի համեմատ հիմնական ծրագրերի ցածր կատարողականի, բյուջետային քննարկումներից դուրս՝ հավելյալ ծախսային պարտավորությունների ստանձնմանը/ֆինանսավորմանը և ընդհանուր առմամբ արդյունավետության նվազմանը:

Բյուջետային ծախսերի վերաբաշխումների կանոնակարգումը հնարավորություն կտա ներդնել գործընթաց, որտեղ հստակ սահմանված է, թե երբ, ում կողմից, ինչ հիմնավորումներով և ինչպիսի ընթացակարգերով կարող են իրականացվել ծախսային վերաբաշխումները: Ըստ էության, դա կապահովի, որ բոլոր գերատեսչական մարմինները հստակ պատկերացում ունենան վերաբաշխման կանոնների վերաբերյալ: **Արդյունքում վերաբաշխումների գործընթացը կլինի ավելի կանխատեսելի, կառավարելի, իսկ դրանց թվաքանակը և ծավալը կնվազի:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Բյուջետային ծախսերի պլանավորման որակի և կանխատեսելիության բարձրացում: (2) Վերաբաշխումները կլինեն ավելի թիրախային՝ օբյեկտիվ հիմքով պայմանավորված և ավելի համահունչ կառավարության առաջնահերթություններին և ուղղություններին: (3) Կնվազեն վերաբաշխումները կառավարելու համար պահանջվող ժամանակն ու ջանքերը թե՛ գերատեսչություններում և թե՛ ֆինանսների նախարարությունում: (4) Պլանավորված ծրագրերի վրա կենտրոնանալու արդյունքում կբարելավվեն ծրագրի արդյունքները և ընդհանուր հանրային ծառայությունների մատուցումը:

3.2 Բյուջետային ծախսերի առաջնահերթությունների ներկայացման, ինչպես նաև ծախսերի 5% և 10% նվազեցման սցենարների ներկայացման պահանջների ամրագրում մեթոդական ցուցումներում:

Նպատակ: Բյուջետային և առհասարակ, հանրային ֆինանսների կառավարման համակարգի դիմադրողականության բարձրացում ճգնաժամերի և տնտեսական զարգացման բացասական միտումների պարագայում:

Անմիջական արդյունք	Վերանայված մեթոդական ցուցումներ
Արդյունքային ցուցանիշ	Մեթոդական ցուցումները պարունակում են պետական մարմինների կողմից բյուջետային ծախսերի առաջնահերթությունների ներկայացման, ինչպես նաև ծախսերի 5% և 10% նվազեցման սցենարների ներկայացման պահանջներ (ներառյալ ձևաչափերը):
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր «6.10 Պետական ծախսեր» ենթաբաժնի 1-ին կետով սահմանված նպատակներ:

Հիմնավորում: Ներկայումս չկան գործող մեխանիզմներ, որոնք թույլ կտան սահուն իրականացնել ընթացիկ ծախսերի վերանայումներ/կրճատումներ, երբ չկանխատեսված հանգամանքներով պայմանավորված առաջանում է դրա անհրաժեշտությունը:

Սա հանգեցնում է նրան, որ երբ իրավիճակից կախված ֆինանսավորման առաջնահերթությունները փոխվում են կամ ծախսերի կրճատման անհրաժեշտություն է առաջանում, զգալի դժվարություններ են առաջանում ծախսերի կրճատման ուղղությունների, չափի և առաջնահերթությունների սահմանման ուղղությամբ որոշումների կայացման հարցում: Պետական մարմինները, և առհասարակ կառավարությունը չունի մշակված սցենարներ ծախսերի անկանխատեսելի կրճատման կարիքների պարագայում արդյունավետ գործելու համար:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի կրճատման տարբեր սցենարների առկայությունը հնարավորություն կտա արագ արձագանքել ծախսերի կրճատում պահանջող իրավիճակներին՝ ստեղծելով մեխանիզմներ, որոնք կառավարությանը թույլ կտան հստակ սահմանել ծախսերի առաջնահերթությունները և կրճատվող ընթացիկ ծախսերի ուղղությունները: **Արդյունքում, կառավարությունը ֆինանսական պլանավորման տեսանկյունից կմեղմի անորոշությունները և անհրաժեշտության դեպքում պատրաստ կլինի արձագանքել փոփոխվող իրավիճակներին:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) ծախսային գերակայությունների սահմանման հստակ և միասնական մեխանիզմի ներդրում, (2) ծախսերի սցենարային վերլուծության գործիքակազմի ներդրում, (3) ճգնաժամերի ֆինանսական կառավարման բարելավում, (4) բարելավված ֆիսկալ կայունություն տնտեսական և այլ ցնցումների ժամանակ:

4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1 Պետական բյուջետային ծրագրերի գնահատման համակարգի ստեղծում:

Նպատակ: Ապահովել պետական միջոցների բաշխումն առավել արդյունավետ՝ կառավարության նպատակներին համապատասխանող և սոցիալ-տնտեսական առավել արդյունք ստեղծող ծրագրերի

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
Բյուջետային ծրագրերի գնահատման ընթացակարգ	Բյուջետային ծրագրերի գնահատման ընթացակարգերն առկա են: (Գնահատման մեթոդաբանություն, գնահատման ենթակա ծրագրերի ընտրության մեթոդաբանություն, գնահատման տարեկան ծրագիր):	2025թ., 1-ին կիսամյակ
Համապատասխան կարողություններով ստորաբաժանում	Բյուջետային ծրագրերի գնահատման պատասխանատու ստորաբաժանումը համալրված է, մասնագետները վերապատրաստված են և ունեն համապատասխան կարողություններ:	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.10 Պետական ծախսեր» բաժնի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված նպատակներ:	

Հիմնավորում: Ներկայումս բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթացներ ներդրված չեն: Բյուջետային ծրագրերի տրամաբանական կառուցվածքի, արդյունավետության, համապատասխանության, ծախսարդյունավետության և այլ կարևոր հատկանիշների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության բացակայությունը սահմանափակում է բյուջետային ծրագրերի վերաբերյալ փաստահեն որոշումներ կայացնելու ՀՀ կառավարության հնարավորությունները:

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակում բյուջետային ծրագրերի վերանայմանն ու ռազմավարական պլանավորման համակարգին ներդաշնակեցմանը հաջորդող կարևոր քայլ է հանդիսանում բյուջետային ծրագրերի պարբերական և կանոնավոր գնահատման գործընթացի ներդրումը: **Բյուջետային ծրագրերի գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կտա համապարփակ պատկերացում կազմել առանձին ծրագրերի արդյունավետության, համապատասխանության, ծախսարդյունավետության և այլ կարևոր հատկանիշների վերաբերյալ՝ նպաստելով բյուջետային գործընթացում ծրագրերի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Հանրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում:

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

5.1 «Պետական պարտքի մասին» օրենքի վերանայում, օրենքում «պետական պարտք» և «կառավարության պարտք» սահմանումների վերանայում:

Նպատակ: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի սահմանումների համապատասխանեցում միջազգային ֆինանսական կառույցների կողմից կիրառվող սահմանումներին:

Անմիջական արդյունք	Օրենքի նախագիծ
Արդյունքային ցուցանիշ	«Պետական պարտքի մասին» նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2008թ., և այս տարիների ընթացքում օրենքի կիրառմանը զուգահեռ ի հայտ են եկել որոշ անհամապատասխանություններ միջազգային պրակտիկայում կիրառվող և միջազգային ֆինանսական կառույցների կողմից ընդունված փաստաթղթերում առաջարկվող սահմանումների միջև:

Այս անհամապատասխանություններն ազգային մակարդակով ձևավորված տվյալները դարձնում են անհամադրելի՝ միջազգային կառույցներին տրամադրվող և նրանց կողմից հրապարակվող հաշվետվությունների հետ և կարող են ազդել ֆինանսական գնահատականների վրա:

Այս խնդիրը լուծելու համար պետք է հստակեցնել «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում «պետական պարտք» և «կառավարության պարտք» հասկացությունները և հնարավորինս մոտարկել դրանք միջազգային պրակտիկայում կիրառվող սահմանումներին: **Սա կապահովի միջազգային կառույցներին տրամադրվող և նրանց կողմից հրապարակվող միասնական տվյալների առկայություն և կրթարժանի պետական պարտքի վիճակագրության որակը:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Պարտքի հաշվետվողականության և վիճակագրության բարելավում:

Ներքին պետական պարտքի գործիքակազմի ընդլայնում

Նպատակ: Ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի ավելացումը:

Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր «6.8 Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնում, ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2025 - 2027թթ. ռազմավարական ծրագրով, ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 33-րդ կետով սահմանված նպատակներ:
--	---

5.2 Պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների հարթակի գործարկում:

Անմիջական արդյունք	Շրջանառության մեջ գտնվող միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի քանակի կրճատում
Արդյունքային ցուցանիշ	Փոխանակման աճուրդներն իրականացված են և շրջանառության մեջ գտնվող միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի քանակը 20-ից քիչ է:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ

5.3 Գնահին կցված պարտատոմսերի թողարկում:

Անմիջական արդյունք	Գնահին կցված պարտատոմսերի թողարկում
Արդյունքային ցուցանիշ	Գնահին կցված պարտատոմսերը թողարկված և տեղաբաշխված են (մեկ պիլոտային թողարկում):
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ (Թողարկումը կիրականացվի ԿԲ ենթակառուցվածքների առկայության դեպքում՝ դրամավարկային քաղաքականության հետ համակարգման շրջանակներում):

5.4 Նպատակային պարտատոմսերի տարբերակների մշակման, թողարկման և տեղաբաշխման սցենարների հայեցակարգի մշակում:

Անմիջական արդյունք	Նպատակային պարտատոմսերի թողարկման հայեցակարգ
Արդյունքային ցուցանիշ	Նպատակային պարտատոմսերի թողարկման հայեցակարգը մշակված է և ներկայացված է կառավարության քննարկմանը:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ

Հիմնավորում: ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը:

Կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրով որպես նպատակադրում ամրագրված է ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի ավելացումը:

Սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շուկային առաջարկել նոր գործիքներ՝ ընդլայնելով ներդրողների շրջանակը: Այս նպատակով ավանդական գործիքներին զուգահեռ կդիտարկվեն նոր թիրախային ֆինանսավորման գործիքներ ՀՀ կառավարության տարբեր ոլորտների ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար:

Մասնավորապես՝ (1) կգործարկվի պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների հարթակ: Շրջանառության մեջ առկա պարտատոմսերի կոնսոլիդացիան կնպաստի շրջանառության մեջ քիչ քանակով, բայց մեծ ծավալով պարտատոմսերի առկայությանը, ինչի դեպքում կմեծանա պարտատոմսերի իրացվելիությունը և շուկայի խորությունը: (2) Կթողարկվեն գնաճին կցված պարտատոմսեր, և (3) կդիտարկվի պետական բյուջեով նախատեսված որոշակի ոլորտներում առանձին նախագծերի ֆինանսավորման նպատակով նպատակային պարտատոմսերի թողարկման հնարավորությունը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Արդյունքում հնարավոր կլինի նպաստել ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը կառավարելիության շրջանակներում պահելուն, և հատկապես փոխարժեքի բարձր ռիսկը նվազեցնելուն:

6. ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

6.1 Գանձապետական գործառույթի ապակենտրոնացում և թվայնացում:

Նպատակ: Թափանցիկության բարձրացում և ֆինանսական հոսքերի առավել ծախսարդյունավետ կառավարում:

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
Փոփոխությունների փաթեթ	Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի և հարակից այլ օրենքների մեջ փոփոխությունների իրականացման փաթեթը մշակված և ներկայացված է ՀՀ ԱԺ:	2025թ., 2-րդ կիսամյակ
Որոշման նախագիծ	Մշակված և ընդունված է ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	2025թ., 2-րդ կիսամյակ
Փոփոխությունների նախագիծ	Բյուջետային համակարգի մասին օրենքի փոփոխությունները մշակվել և ներկայացվել են ՀՀ ԱԺ:	2025թ., 1-ին կիսամյակ
Ծրագրային ապահովման փաթեթը	Ծրագրային ապահովման փոփոխությունների փաթեթը մշակված է:	2025թ., 2-րդ կիսամյակ
Հայեցակարգ	«Գանձապետական համակարգի զարգացման տեսլական» հայեցակարգը մշակված և հաստատված է:	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:	

Հիմնավորում: Չնայած նրան, որ ներկայումս գանձապետական համակարգը բավականին բարձր թվայնացման մակարդակ ունի, սակայն օգտատիրոջ տեսանկյունից հնացած ինտերֆեյսը և որոշ գործընթացների դեռևս «ձեռքով» իրականացումը հանգեցնում է անհարկի անարդյունավետությունների ինչպես ֆինանսական ռեսուրսների կառավարման, այնպես էլ քաղաքացիներին մատուցվող ծառայություններից օգտվելու դյուրինության տեսանկյունից:

Ներկայումս գանձապետարանի ժամանակի մեծ մասը ծախսվում է ընթացիկ սպասարկում իրականացնելու վրա(տարեկան մոտ 18000 գրություն): Նման պայմաններում համակարգի ռիսկերի կառավարման, զարգացման և կայունության բարձրացման ուղղությամբ իրականացվող գործառույթները փաստացի սառեցված են:

Ապակենտրոնացման արդյունքում՝ գանձապետական գործառույթի շրջանակներում «վերադարձների» գործառույթը կիրականացնեն ճյուղային մարմինները՝ խնդրին ամենամոտ կանգնած լինելու սկզբունքով: E-Payments համակարգը կլինի բոլոր մարմինների ծրագրերի շրջանակներում վճարումներ ընդունելու gateway՝ քաղաքացիները առցանց վճարումներ կարող են իրականացնել բոլոր բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով: Ապակենտրոնացումը, այդ թվում թվայնացման մակարդակի բարձրացման միջոցով, կնպաստի համակարգի բեռնաթափմանը, ինչն իր հերթին թույլ կտա գանձապետական գործառույթը վերածել համակարգի «ստատուս քվո» վիճակում պահպանում իրականացնելուց դեպի համակարգաստեղծ, պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացումը թիրախավորող գործառույթի:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ:

- (1) Գանձապետական գործառույթը կդառնա համակարգաստեղծ, պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացումը թիրախավորող գործառույթ:
- (2) Վարկերի, ենթավարկերի, երաշխիքների և պայմանական պարտավորություն պարունակող պայմանագրերի կառավարման արդյունավետությունը զգալիորեն կբարելավվի՝ “ձեռքով” և Excel-ի վրա հիմնված հաշվառման մեթոդներից ամբողջովին թվայնացված համակարգի անցնելու միջոցով: Հնացած պրակտիկների փոխարինումը կբարձրանցնի պետության ակտիվների և պարտավորությունների կառավարման արդյունավետությունը:
- (3) Հանրային ծառայությունների բարելավման տեսանկյունից թվայնացումը հանգեցնելու է քաղաքացիների կողմից վճարումներ իրականացնելու և գումարներ հետ ստանալու գործընթացների հարմարավետության և ծառայությունների որակի աճին:

7. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1 Գնումների մասին օրենքի վերանայումների իրականացում:

Նպատակ: Գնումների գործընթացի ճկունության և հաշվետվողականության բարձրացում, որոշումների կայացում առավել տեղյակ և պատասխանատվություն կրելու կարողություն ունեցող կառավարման միավորի կողմից:

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
Օրենքի փոփոխությունների փաթեթ	Մշակվել են համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթների նախագծերը:	2025թ., 1-ին կիսամյակ
Օրենքի փոփոխությունների փաթեթ	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթները հաստատված են ԱԺ-ի կողմից:	2025թ., 2-րդ կիսամյակ
Ենթաօրենսդրական ակտ	Ենթաօրենսդրական ակտերը մշակված են:	2025թ., 2-րդ կիսամյակ

**Գործողության
իրականացման
հիմքեր**

Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 11.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: Ներկայումս գործող ՀՀ պետական գնումների մասին օրենքը չի բավարարում արդի պահանջներին: Մրցակցային ընթացակարգերը մշակվել են մինչ-քովիդյան ժամանակաշրջանում, ինչից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների թռիչքաձև զարգացումը երևան է բերել նոր՝ առավել արդյունավետ ընթացակարգեր:

Ներկայումս՝

- (1) Մեկ անձի վերաբերյալ որոշումները (բացառությամբ հրատապության) դեռևս կենտրոնացված է կառավարությունում՝ որոշումներն ընդունում են ամբողջական տեղեկատվությանը չտիրապետող մարմնի կողմից:
- (2) Մրցույթային ընթացակարգերը վարչարարական տեսանկյունից որոշ դեպքերում զիջում են մեկ անձ ընթացակարգերին:
- (3) Բացակայում են շրջանակային համաձայնագիր հասկացությունը և պասիվ մասնակցությամբ ընթացակարգերը:
- (4) Պայմանագրերի դադարեցման ընթացակարգը, մասնավոր գործընկերոջ ձախողման դեպքում, հանգեցնում է ծրագրերի անորոշ ժամկետով սառեցմանը:
- (5) Կառավարությունը սահմանում է տեխնիկական մակարդակի ընթացակարգեր՝ ինչը չի նպաստում համակարգի հարմարվողականությանը:
- (6) Շահերի բախման համակարգը չի համապատասխանում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված պահանջներին:

Ավելի բարձր արդյունավետությունը պահանջում է մասնավորապես՝ որոշումների ապակենտրոնացում, շահերի բախման բացառման մեխանիզմի արդիականացում, նոր մրցակցային ընթացակարգերի գործարկման և ժողովրդավարության պայմաններում մեկ անձից գնումների հաշվետվողականության մեխանիզմներով զսպում:

Նոր փոփոխություններով սահմանված մրցակցային ընթացակարգերը հանգեցնելու են մասնավոր հատվածի հետաքրքրության աճի, ինչը կբերի արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը: Ապակենտրոնացումը կհանգեցնի խնդրին ամենամոտ կանգնած անձի կողմից պատասխանատու որոշումների կայացմանը՝ բարձրացնելով փողի դիմաց արժեքը կամ բացահայատելով համակարգի իրական խնդիրները: Մեկ անձից գնումների զսպման նոր մեխանիզմը կբարձրացնի հաշվետվողականությունը, միաժամանակ թույլ տալով ժամանակին արձագանքել ի հայտ եկող խնդիրներին:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Մրցակցության աճ, (2) թափանցիկության բարձրացում, (3) փողի դիմաց արժեքի բարձրացում, (4) ավելի մեծ հաշվետվողականություն:

7.2 Էլեկտրոնային գնումների նոր համակարգի մշակում և ներդրում:

Նպատակ: Գնումների գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Պայմանագիր ծառայություն մատուցող կողմի հետ	Էլեկտրոնային գնումների նոր համակարգ
Արդյունքային ցուցանիշ	Մշակման ծառայություն մատուցողն ընտրված է:	Համակարգը գործարկված է:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.10 Պետական ծախսեր» ենթաբաժնի 17-րդ կետով սահմանված նպատակներ: ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՀՀ ՖՆ 8.1 միջոցառում:	

Հիմնավորում: Գնումների ներկա համակարգը ներդրվել է 2010 թվականին և, չնայած ժամանակին արդիական լինելուն, բարոյապես մաշված է և չի համապատասխանում գնումների համակարգում իրականացվող շարունակական բարեփոխումների պահանջներին: Համակարգի որևէ ֆունկցիոնալ փոփոխության իրականացումը բացառված է, իսկ բուն համակարգը գտնվում է ամենօրյա ռիսկային տիրույթում:

Ներկա համակարգի միջոցով հնարավոր չէ՝ (1) արդյունավետ հավաքել որակյալ վիճակագրություն, (2) իրականացնել պայմանագրերի թվային կառավարում և հետևել դրանց իրականացմանը, (3) ներդնել նոր մրցույթային ձևաչափեր, (4) համակարգին «միացնել» մեծ ծավալով գնում իրականացնող շահառուների, (5) ներդնել ռիսկերի բացահայտման ավտոմատ համակարգ, (6) ամբողջական ներդնել տեխնիկական առաջադրանքների փափուկ իտերատիվ ստանդարտների մեթոդաբանությունը: Արդյունքում գնումների գործընթացը անարդյունավետ է և ոչ բավարար թափանցիկ:

Ժամանակակից ֆունկցիոնալ պահանջներին համապատասխան էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդնումը կլուծի նշված խնդիրները՝ բարձրացնելով գնումների համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը:

Պետական ֆինանսների կառավարման հիմնական արդյունքներ: (1) Գնումների համակարգի նկատմամբ վստահության աճ, (2) թափանցիկության և հաշվետվողականության աճ, (3) գործառնական ծախսերի կրճատում (ֆինանսական և ժամանակային), (4) գնումների համակարգի ճկունության աճ, (5) փաստաթղթեր քաղաքականության իրականացման համար հիմքերի ստեղծում:

7.3 Գնումների մասին նոր օրենքի իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացում (ներառյալ՝ ՖՆ աջակցող ստորաբաժանումներ և այլ գերատեսչություններ):

Նպատակ: Գնումների մասին նոր օրենքի հաջող կիրարկման ապահովում:

Անմիջական արդյունք	Ստորաբաժանում
Արդյունքային ցուցանիշ	ՀՀ գնումների վարչությունում ձևավորված է 2 բաժին:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: Ներկայումս ՀՀ ՖՆ-ն իրականացնում է միայն մեթոդաբանական ուղեկցում և համակարգի որոշ մասի գործունեության տեխնիկական պասարկում: Արդյունքում համակարգը դանդաղ է զարգանում, հաճախ հրաժարվելով կիրառել նորարար մոտեցումներ, քանի որ ստատուս քվո-ից դուրս գալու ռիսկը բարձր է:

Նոր օրենսդրության պայմաններում ՀՀ ֆինանսների նախարարությունը փաստացի ստանձնելու է երկու դերակատարում՝ ընթացակարգերը կարգավորող ակտերի մշակում և արդյունավետության բարձրացմանն ուղղված քվադի-խորհրդատվական դերի ստանձնում: Սա ենթադրում է նաև այս փոփոխությունների իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ՖՆ գնումների վարչությունում համապատասխան անձնակազմով համալրված նոր բաժինների ձևավորում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պետք է ձևավորի «գիտելիքի կենտրոն /շտեմարան» որի նպատակն է լինելու արձանագրել հաջողված փորձը, գնահատել արդյունավետության բարձրացման հնարավոր ուղղությունները՝ հիմնվելով թվային համակարգի միջոցով գեներացված վիճակագրական տեղեկատվության վրա:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Գնումների համակարգի արդյունավետության բարձրացում:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

8.1 Հանրային ներդրումների կառավարման գործառույթի ձևավորում ՀՀ ֆինանսների նախարարություն:

Նպատակ: Հանրային ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի բարելավում և համակարգի արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
ՀՀ վարչապետի որոշում	ՀՀ ֆինանսների նախարարության և Էկոնոմիկայի նախարարության կանոնադրություններում համապատասխան փոփոխություններն իրականացված են:	2025թ., 1-ին կիսամյակ
ՀՀ կառավարության փոփոխված որոշում	«Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի թիվ 175-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններն իրականացված են:	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «6.10 Պետական ծախսեր» ենթաբաժնի «Հանրային ներդրումների կառավարման համակարգ» մասով սահմանված նպատակներից:	

Հիմնավորում: Ներկայումս հանրային ներդրումների կառավարման համակարգում առկա են մի շարք էական մարտահրավերներ, որոնք խոչընդոտում են Հայաստանում հանրային ներդրումների արդյունավետ իրականացմանը: Վերջիններիս շարքում կարելի է առանձնացնել ծրագրերի ընտրության համակարգի անարդյունավետությունը, ծրագրերի բյուջետավորման հետ կապված խնդիրները, կապիտալ ծրագրերի շարունակական թերակատարումները և այլն:

Հանրային ներդրումների կառավարման համակարգում առկա խնդիրները հանգեցնում են պետական կապիտալ ծախսերի արդյունավետության անկմանը, առանցքային կարևորություն ունեցող ծրագրերի վերհանման և բյուջետավորման դժվարություններին, կապիտալ ծախսերի շարունակական թերակատարումների և այլ մարտահրավերների:

Հանրային ներդրումների կառավարման գործառույթի տեղափոխումը ՀՀ ֆինանսների նախարարություն թույլ կտա մեծացնել համակարգի կապը բյուջետային գործընթացի հետ, իրականացնել ռազմավարական պլանավորում և գնահատել ներդրումային ծրագրերի կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները՝ կենտրոնանալով ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև ծրագրերի առավել լայն ետևանքների վրա, ինչպես նաև հաշվի առնելով հարկաբյուջետային սահմանափակումները:

Բացի այդ, ՀՆԿ համակարգի արդյունավետության բարձրացմանը կնպաստեն նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում տարիների ընթացքում ձեռք բերված

զգալի ինստիտուցիոնալ կարողություններն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսական վերլուծությունների և կանխատեսումների իրականացումը, հարկաբյուջետային ռիսկերի գնահատումը և կառավարումը, պարտքի կառավարումը, միջազգային դոնորների հետ համագործակցությունը և այլն, որոնք առանցքային են հանրային ներդրումների արդյունավետ կառավարման համար:

Գործողության իրականացումը կհանգեցնի Հայաստանում հանրային ներդրումների կառավարման համակարգի արդյունավետության էական աճի՝ նպաստելով առավել նշանակալի արդյունքներին միտված կապիտալ ծրագրերի իրականացմանը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) հանրային ռեսուրսների բաշխման արդյունավետության աճ, (2) հասարակության կյանքի որակի բարելավում:

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ

9.1 ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործունեության ստանդարտների վերանայում, ներքին աուդիտի միջազգային ինստիտուտի ստանդարտներին համապատասխանեցում:

Նպատակ: ՀՀ հանրային հատվածում ներքին աուդիտորների գործունեության՝ միջազգային մասնագիտական ստանդարտներին և վարքագծի կանոններին համապատասխան իրականացման ապահովում:

Անմիջական արդյունք	ՀՀ կառավարության որոշում
Արդյունքային ցուցանիշ	ՀՀ Կառավարության 2011 թվականի թիվ 1233-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունված է:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 14-րդ կետով սահմանված նպատակ:

Հիմնավորում: ՀՀ Կառավարության 2011 թվականի թիվ 1233-Ն որոշման N 1 հավելվածով հաստատվել է Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտները, իսկ N 2 հավելվածով՝ Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոնները:

Այդ ժամանակ նշված ստանդարտների համար հիմք են հանդիսացել Ներքին Աուդիտորների ինստիտուտի (The Institute of Internal Auditors_ IIA) կողմից մշակված և ընդունված ստանդարտներն ու վարքագծի կանոնները: Ներքին աուդիտը հանդիսանում է մասնագիտական գործունեություն, որը հիմնված է մասնագիտական գործունեության ստանդարտների և սկզբունքների վրա: 2025 թվականից ուժի մեջ են մտնում Ներքին Աուդիտորների ինստիտուտի (IIA) կողմից լրամշակված և վերա-

փոխված ստանդարտները և անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Կառավարության վերոնշյալ որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ՝ ներքին աուդիտի միջազգային ինստիտուտի ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

Ստանդարտների լրամշակումը կապահովի Հայաստանի պետական հատվածում ներքին աուդիտորների գործունեության համապատասխանեցում միջազգային լավագույն փորձին, կբարելավի աուդիտի որակը և կաջակցի հանրային հատվածի ավելի արդյունավետ կառավարմանը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Ներքին աուդիտի գործընթացների որակի բարձրացում, (2) ներքին աուդիտի գործառույթների նկատմամբ վստահության ամրապնդում, (3) արդյունավետ գործող ներքին աուդիտի համակարգը կբարձրացնի պետական կառույցների նկատմամբ հավատը շահառուների աչքերում և վստահությունն առ այն, որ հանրային միջոցները ծախսվում են արդյունավետ և նպատակային:

9.2 Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման իրականացում:

Նպատակ: ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման մեթոդաբանություն	Գնահատման հաշվետվություն
Արդյունքային ցուցանիշ	«Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատում իրականացնելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրաման:	Ներքին աուդիտի համակարգ ներդրած Հանրային հատվածի կազմակերպությունների առնվազն 30%-ում իրականացվել է արտաքին գնահատում:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:	

Հիմնավորում: Համաձայն ներքին աուդիտորի մասնագիտական գործունեության 1300 ստանդարտի՝ ՀՀ հանրային հատվածի յուրաքանչյուր կազմակերպության ներքին աուդիտի ղեկավարը պետք է մշակի և կիրառի ներքին աուդիտի որակի երաշխավորման ու բարելավման ծրագիր: Նշված ծրագիրը պետք է պարբերաբար ենթարկվի ներքին և արտաքին գնահատման: Արտաքին գնահատումը պետք է իրականացվի առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, սակայն հատկանշական է, որ ներքին աուդիտի համակարգի ներդրումից ի վեր արտաքին գնահատում չի իրականացվել: Արտաքին գնահատումների միջոցով գնահատվում է ներքին աուդիտի համապատասխանությունը ներքին աուդիտի օրենսդրությանը,

ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ՝ ներքին աուդիտի գործունեության բարելավման վերաբերյալ:

Արտաքին գնահատման նպատակն է պարզել՝ ներքին աուդիտի ստորաբաժանման անկախությունը և անկողմնակալությունը, փաստաթղթերի հետ աշխատանքների ընթացքում գաղտնիության պահպանումը, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրի մշակման ընթացքում ընտրված մոտեցումների արդյունավետությունը և նպատակահարմարությունը, ներքին աուդիտի աշխատանքի որակի ներքին վերահսկման համակարգը, կազմակերպություններում ներքին աուդիտի գործունեության համապատասխանությունը ներքին աուդիտի օրենսդրությանը և վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կատարողականը, ինչպես նաև ներքին աուդիտի գործունեության համապատասխանությունը ներքին աուդիտի կանոնակարգին:

Նշված հարցերի պատասխանները հնարավորություն են ընձեռում հասկանալու ներքին աուդիտի վիճակը տվյալ կազմակերպությունում, բացահայտելու բարելավման ուղղությունները և նաև նշելու գործողությունները, որոնք թույլ կտան բարձրացնել ներքին աուդիտի որակն ու արդյունավետությունը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Ներքին աուդիտի գործառույթների նկատմամբ վստահության ամրապնդում, (2) ռեսուրսների օգտագործման և ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության բարելավում, (3) պետական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ վստահության ամրապնդում:

9.3 Իրականացնել վերլուծություն ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման նպատակահարմարությունը գնահատելու համար:

Նպատակ: Ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի ներդրման ապահովում:

Անմիջական արդյունք	Գնահատման հաշվետվություն
Արդյունքային ցուցանիշ	Գնահատման հաշվետվությունը ներկայացված է, հետագա գործողությունները հստակեցված են:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: Պետական ներքին ֆինանսական հսկողությունը (PIfC) հայեցակարգ է, որը դեռևս 2000-ականների սկզբներին մշակվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ աջակցելու անդամության թեկնածու կամ դիմորդ երկրներին իրենց հանրային ներքին հսկողության համակարգերի բարեփոխման հարցում:

Հայեցակարգը հիմնված է երեք բաղադրիչների վրա, որոնք են՝ (1) ֆինանսական կառավարման և հսկողության համակարգը, (2) ներքին աուդիտի համակարգը, (3) կենտրոնացված ներդաշնակեցման միավորը, որն ապահովում է վերոնշյալ համակարգերի ներդաշնակեցումը տվյալ երկրի օրենսդրությանը և կարգերին:

Քանի որ նշված հայեցակարգի մշակումից արդեն իսկ անցել է շուրջ 20 տարի և այս ժամանակի ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ գլոբալ փոփոխություններ, անհրաժեշտություն է առաջացել գնահատելու ֆինանսական կառավարման և հսկողության համակարգի առաջարկվող մոդելի կիրառելիությունը: Այս նպատակով նախատեսվում է իրականացնել վերլուծություն, որի հիման վրա որոշում կկայացվի համակարգի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ, ինչից հետո կհստակեցվեն անհրաժեշտ գործողությունները և դրանց իրականացման ժամանակացույցը: Ըստ դրա կորոշվի նաև «ՊՖԿ համակարգի բարեփոխումների 2019-2023 ռազմավարության» գործողությունների ծրագրով սահմանված **37.1, 37.2, 37.3** միջոցառումների իրականացման նպատակահարմարությունը:

9.4 Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացում:

Նպատակ: ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
Կարողությունների զարգացման ծրագիր	Ներքին աուդիտորների մասնագիտական գիտելիքների և կարողությունները գնահատված են, կարիքները բացահայտված են, զարգացման ծրագիրը հաստատված է:	2025թ., 1-ին կիսամյակ
Վերապատրաստված ներքին աուդիտորներ	Վերապատրաստում են անցել ՀՀ հանրային հատվածում աշխատող այն որակավորված ներքին աուդիտորները, որոնց համար վերապատրաստման ժամանակահատված է սահմանված 2025թ.:	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:	

Հիմնավորում: Համաձայն ներքին աուդիտորի մասնագիտական գործունեության 1210 ստանդարտի՝ ներքին աուդիտորները պետք է տիրապետեն համապատասխան գիտելիքների և հմտությունների, իրենց աշխատանքային պարտականություններն իրականացնելու համար: Ներքին աուդիտորներն իրենց գիտելիքները և հմտությունները պետք է կատարելագործեն շարունակական մասնագիտական վերապատրաստ-

ման միջոցով: Ներքին աուդիտիտորների գիտելիքների և հմտությունների բացերի ուսումնասիրումն ու արձանագրումը լիազոր մարմնին հնարավորություն է տալիս համակարգային եղանակով մշակել և իրականացնել ներքին աուդիտորների կարողությունների զարգացման և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր:

Նշված գործողությունները հնարավորություն են ընձեռում բարձրացնել ՀՀ հանրային հատվածում գործունեություն ծավալող ներքին աուդիտորների գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև իրազեկվածության աստիճանը՝ դրանով էականորեն բարելավելով ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: 1) Ռեսուրսների օգտագործման և ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության բարելավում (2) պետական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ վստահության ամրապնդում, (3) պետական կառույցների նկատմամբ վստահության բարձրացում:

9.5 Կենտրոնացված ներդաշնակեցման միավորի անձնակազմի համալրում և կարողությունների զարգացում:

Նպատակ: ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Համալրված ստորաբաժանում
Արդյունքային ցուցանիշ	ԿՆՄ անձնակազմը համալրված է, առկա են անհրաժեշտ կարողություններ:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի 17-րդ կետ, ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: Կենտրոնացված ներդաշնակեցման միավորը (ԿՆՄ) պատասխանատու է միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական կառավարման, հսկողության և ներքին աուդիտի համակարգի ներդրման աշխատանքները համակարգելու և դրանք մոնիթորինգի ենթարկելու համար:

Ներկայումս ԿՆՄ-ի գործառույթներն իրականացնող ստորաբաժանման առկա մարդկային ռեսուրսները չեն բավարարում ՀՀ հանրային հատվածում իր պատասխանատվության ներքո գտնվող ֆինանսական կառավարման համակարգի ներդրումը և ներքին աուդիտի զարգացումն ապահովելու համար: Հետևաբար, կարիք կա նախ համալրելու ստորաբաժանման թափուր հաստիքները, իսկ այնուհետև շարունակաբար զարգացնելու կարողությունները:

Որակյալ մասնագետներով համալրումը և կարողությունների շարունակական կատարելագործումը հնարավորություն կտա սկզբնական շրջանում մշակել ոլորտային քաղաքականությունը, ապահովել իրավական դաշտը, կազմակերպել և իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործողություններն ու գործառույթի իրականացումը: Մշտադիտարկումների և այլ գործողությունների միջոցով բացահայտել առկա թույլ կողմերը և կատարելագործել դրանց լուծման մեխանիզմները և արդյունքում ապահովել արդյունավետ գործող ներքին աուդիտի համակարգ:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Ռեսուրսների օգտագործման և ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության բարելավում (2) պետական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ վստահության ամրապնդում, (3) պետական կառույցների նկատմամբ վստահության բարձրացում:

10. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

10.1 Հայաստանի Հանրապետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

Նպատակ: Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում:

Անմիջական արդյունք	Ֆինանսական հաշվետվություն
Արդյունքային ցուցանիշ	Պետության մակարդակով ներկայացվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններ:
Ժամկետներ	2025, 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ 25.3 միջոցառում

Հիմնավորում: Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պահանջը ներկայացված է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հոդված 18-ով: Այս հաշվետվությունների իրականացումը պահանջում է կոնկրետ տվյալների գեներացում, որը նախատեսված էր ապահովել ԿՖԿՏՀ-ի ներդրման արդյունքում: Ներկայումս որոշում է կայացվել, մինչև ԿՖԿՏՀ-ի ներդրումը կազմել հաշվետվություններ՝ պահանջվող ինֆորմացիան գերատեսչություններից հավաքագրելու ճանապարհով:

Տվյալ գործողության արդյունքում կունենանք Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները, որոնք համակարգված կներկայացնեն Հայաստանի Հանրապետության ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը:

Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, ֆինանսական հաշվետվությունները կհանդիսանան կանոնադրված տեղեկատվության աղբյուր վերլուծությունների, կանխատեսումների և որոշումների կայացման համար:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները թույլ են տալիս ամբողջական պատկերացում ձևավորել հանրային ֆինանսների մասին, ապահովելով՝ (1) ռեսուրսների բաշխման և հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման հիմքերի բարելավում, (2) բյուջետավորման և երկարաժամկետ ֆինանսական պլանավորման բարելավում, (3) պետական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում, (4) պետական ծախսերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, (5) կառավարության և նրա կողմից պետական ֆինանսների արդյունավետ կառավարման նկատմամբ վստահության ամրապնդում:

11. ՍՊԵՑԻՖԻԿ ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

11.1 Պետական մասնակցությամբ ընկերությունների (ՊՄԸ) սեփականության քաղաքականության մշակում:

Նպատակ: Պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության նպատակների հստակեցում, կառավարման արդյունավետության բարձրացում և ՊՄԸ-ներից բխող ֆիսկալ ռիսկերի արդյունավետ կառավարում:

Անմիջական արդյունք	Իրավական ակտ
Արդյունքային ցուցանիշ	Համապատասխան իրավական ակտն ընդունված է:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 27-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: Ներկայումս բացակայում է ՊՄԸ-ների սեփականության միասնական քաղաքականություն, որ կսահմանի ՀՀ-ում պետական մասնակցությամբ ընկերություններին ուղղված սեփականության քաղաքականության սկզբունքները՝ ելնելով հանրային միջոցների արդյունավետ կառավարման, թափանցիկության, հաշվետվողականության և մրցակցային հավասար դաշտի երաշխավորման ՀՀ կառավարության նպատակներից: Քաղաքականության հաստատման նպատակով Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աջակցությամբ մշակվել է «Պետական մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մասին» հայեցակարգային մոտեցումները:

ՀՀ կառավարությունը, հիմնվելով հայեցակարգային մոտեցումների վրա, հանձնառություն է ստանձնում մշակելու ՊՄԸ-ների սեփականության միասնական քաղաքականություն: ՊՄԸ-ների սեփականության միասնական քաղաքականության սահմանումը ապահովելու է հստակություն պետության՝ որպես սեփականատիրոջ նպատակների, առաջնահերթությունների և դրանց հասնելու համար կիրառվելիք ռազմավարական գործիքակազմի ուղղություններով:

Արդյունքում կունենանք ՊՄԸ-ների կառավարման արդյունավետության բարձրացում, ՊՄԸ-ների գործունեության նպատակների համապատասխանեցում հանրային քաղաքականության նպատակներին, թափանցիկության բարձրացում, հանրային շահի պաշտպանություն:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) ՊՄԸ-ներից բխող ֆիսկյալ ռիսկերի նվազեցում, (2) ՊՄԸ-ների սեփականության քաղաքականության համապատասխանեցում հանրային շահին, հանրային շահի պաշտպանություն, (3) թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, (4) հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում:

11.2 Պետական մասնակցությամբ ընկերությունների (ՊՄԸ) ֆինանսական հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման թվային հարթակի (FERST համակարգի) գործարկում:

Նպատակ: Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկյալ ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Էլեկտրոնային համակարգ
Արդյունքային ցուցանիշ	Էլեկտրոնային համակարգը ներդրված և գործարկված է:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 27-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: Պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական վիճակի գնահատման ժամանակ արձանագրվում են ՊՄԸ-ներին ֆինանսական տվյալների անհամապատասխանություններ, որոնք շտկելու արդյունքում առաջ են գալիս վարչարարական մի շարք խնդիրներ: Արդյունքում հնարավոր չէ օպտիմալ կերպով իրականացնել ՊՄԸ-ների ֆինանսական վիճակի գնահատում, ՊՄԸ-ներից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատում և կառավարում:

Ֆինանսական տվյալների անհամապատասխանությունը նվազեցնելու և վարչարարությունը կրճատելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել էլեկտրոնային հարթակ, որտեղ կենտրոնացված կլինեն ՊՄԸ-ի ֆինանսական տվյալները, և որը հնարավորություն կտա բարելավելու տվյալների հավաքագրման, պահպանման և մշակման գործընթացները: Հարթակի գործարկմամբ շահագրգիռ մարմինները հնարավորություն կունենան կարճ ժամանակահատվածում ունենալու ՊՄԸ-ների մասին անհրաժեշտ ցանկացած տեղեկություն և օպերատիվ կերպով իրականացնելու համապատասխան վերլուծություններ:

Էլեկտրոնային համակարգի գործարկման արդյունքում կունենանք՝ (1) ՊՄԸ-ների թափանցիկության բարձրացում և հաշվետվողականության բարելավում, (2) ֆինանսական տվյալների մոնիթորինգի բարելավում, ֆիսկալ ռիսկերի ժամանակին հայտնաբերում, (3) ՊՄԸ-ների ֆինանսական տվյալների միասնական բազայի առկայություն, վարչարարության կրճատում, (4) ՊՄԸ-ներին վերաբերող վերլուծությունների իրականացման արդյունավետության բարձրացում:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) ՊՄԸ-ների թափանցիկության բարձրացում և հաշվետվողականության բարելավում, (2) հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում:

11.3 Պետական մասնակցությամբ ընկերություններից (ՊՄԸ) բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման ԱՄՀ նոր գործիքի ներդրում:

Նպատակ: Պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր գործիք
Արդյունքային ցուցանիշ	Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքը կիրառվում է:
Ժամկետներ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 27-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: Ներկայումս ֆիսկալ ռիսկերի գնահատման ընթացքում կիրառվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «Health Check Tool» մոդելը, որով գնահատվում է ՊՄԸ-ներից բխող ֆիսկալ ռիսկերը, ինչպես նաև վերլուծվում է

վարկառուի ֆինանսական վիճակը՝ բյուջետային վարկերի տրամադրման, դրանց վերակառուցման դեպքում վերջիններից բխող ֆիսկալ ռիսկերը գնահատելու համար:

Ֆիսկալ ռիսկերի ավելի արդյունավետ գնահատման նպատակով նախատեսվում է ներդնել նաև ԱՄՀ-ի կողմից մշակված «**Stress Test (ST) tool**»-ը, որով գնահատվում է ՊՄԳ-ների ֆինանսական դիրքի կայունությունը՝ մի շարք այլընտրանքային սցենարների դեպքում: **Արդյունքում, որոշումների կայացման համար կստեղծվի առավել ամուր հիմքեր՝ ֆինանսական ռիսկերի գնահատման և զսպման համար:**

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Պետական ֆինանսների կառավարման բարելավում, (2) հանրային հատվածի դիմակայունության բարելավում:

11.4 Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման և զսպման գործիքակազմի բարելավումը:

Նպատակ: Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր մոդել
Արդյունքային ցուցանիշ	Իրականացված ուսումնասիրության արդյունքներով ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման նոր մոդելը ներդրված է:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր: ՀՀ ՖՆ միջոցառումների ծրագրի 28-րդ կետով սահմանված նպատակից:

Հիմնավորում: ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի արդյունավետ կառավարումը կարևորվում է պետական բյուջեի կայունության վրա ունեցած իր ազդեցությամբ, հետևաբար ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտումը և դրանց ֆինանսական ազդեցության գնահատումը մեծ կարևորություն են իրենցից ներկայացնում:

Ներկայումս առկա է և՛ գործող, և՛ նոր ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի, ինչպես նաև դրանցից առաջացող ուղղակի և պայմանական պարտավորությունների՝ հանրային ֆինանսների վրա ազդեցության գնահատման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն: Ուստի անհրաժեշտ է ինչպես ՊՄԳ պայմանագրերի ուսումնասիրության և վերլուծության իրականացման գործիքակազմի, այնպես էլ դրանցից առաջացող ուղղակի և պայմանական պարտավորությունների ճշգրիտ գնահատումների իրականացման մեխանիզմների լավարկում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա են ՊՄԳ պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման տարբեր ուղղություններ (այդ թվում՝ ԱՄՀ կողմից մշակված գործիքների կիրառումը): Հայաստանում կիրառվող մեխանիզմների լավարկման հնարավորությունների բացահայտման նպատակով

միջազգային գործընկերների տեխնիկական աջակցությամբ նախատեսվում է ուսումնասիրել լավագույն փորձի տեղայնացման հնարավորությունները: Վերջինս վերաբերում է թե՛ ՊՄԳ պայմանագրերի պայմանական պարտավորությունների գնահատման մոդելի ներդրմանը, թե՛ դրանց՝ իրավական կարգավորման մակարդակում զսպման մեխանիզմների լավարկմանը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) պետական բյուջեի կայունության, (2) հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում:

11.5 Բյուջետային վարկերի (ենթավարկերի) և պետական երաշխիքների տրամադրման և ֆիսկալ ռիսկերի գնահատման և զսպման գործիքակազմի բարելավումը:

Նպատակ: Բյուջետային վարկերի (ենթավարկերի) և պետական երաշխիքների տրամադրման և ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Տվյալների թվային ռեգիստր	Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիք
Արդյունքային ցուցանիշ	Տվյալների թվային ռեսգիստրը առկա է:	Ֆիսկալ ռիսկերի գնահատման գործիքը կիրառվում է:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ	2025թ., 1-ին կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:	

Հիմնավորում: Ներկայումս ֆիսկալ ռիսկերի գնահատման ընթացքում կիրառվում է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված «**Health Check Tool**» մոդելը, որով գնահատվում է ՊՄԸ-ներից բխող ֆիսկալ ռիսկերը, ինչպես նաև վերլուծվում է վարկառուի ֆինանսական վիճակը՝ բյուջետային վարկերի տրամադրման, դրանց վերակառուցման դեպքում վերջիններից բխող ֆիսկալ ռիսկերը գնահատելու համար:

Ֆիսկալ ռիսկերի ավելի արդյունավետ գնահատման նպատակով նախատեսվում է ներդնել ԱՄՀ-ի կողմից մշակված «**Debt Guarantees And Loans Assessment (DGLAT) tool**»-ը: **Արդյունքում, որոշումների կայացման համար կստեղծվի առավել ամուր հիմքեր՝ ֆինանսական ռիսկերի գնահատման և զսպման համար:** Միաժամանակ, կստեղծվի բյուջետային վարկերի (ենթավարկերի) և երաշխիքների վերաբերյալ տվյալների թվային ռեգիստր, որը կբարձրացնի տվյալների անվտանգությունը և կիրառման արդյունավետությունը:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Պետական ֆինանսների կառավարման բարելավում, (2) հանրային հատվածի դիմակայունության բարելավում, (3) հաշվետվողականություն և թափանցիկություն բարձրացում:

11.6 Թվով 4 ՊՈԱԿ-ների գործունեության ուսումնասիրությունը և վերլուծություն:

Նպատակ: Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարելավելում:

Անմիջական արդյունք	Հաշվետվություն
Արդյունքային ցուցանիշ	Թվով չորս / չորս խումբ պետական ոչ առևտրային կազմակերպություններ ուսումնասիրված են, բարելավման առաջարկությունները ներկայացված են:
Ժամկետներ	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	Գերատեսչության նպատակներ: ՀՀ վարչապետի 01.06.2018թ.-ի «ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում:

Հիմնավորում: ՊՈԱԿ-ների գործունեության ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու ինչպես ՊՈԱԿ-ների ընդհանուր գործունեության իրականացման, այնպես էլ հանրային ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունավետության վերաբերյալ: Նշված վերլուծությունների իրականացումը նպաստում է պետական ֆինանսական միջոցների օպտիմալ բաշխմանը, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործման համար մոնիթորինգի իրականացմանը:

Ներկայումս չի իրականացվում ՊՈԱԿ-ների գործունեության խորքային վերլուծություն, ինչը խնդիրներ է ստեղծում ՊՈԱԿ-ներին բաշխված հանրային միջոցների օգտագործման արդյունավետության գնահատման տեսանկյունից:

ՊՈԱԿ-ների գործունեության իրականացվելիք ուսումնասիրությունը նպատակ է հետապնդում պարզել ՊՈԱԿ-ների գործունեության համապատասխանությունը պետության կողմից որդեգրած քաղաքականություններին և ռազմավարություններին, և ներկայացնել համապատասխան առաջարկություններ՝ ոլորտը կարգավորելու և բարելավելու նպատակով:

Արդյունքում կունենաք ՊՈԱԿ-ների կողմից իրականացվող գործունեության արդյունավետության գնահատում, ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, ՊՈԱԿ-ների կառավարման բարելավում, համեմատական վերլուծությունների և բարեփոխումների իրականացում, հանրային միջոցների արդյունավետ օգտագործում:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: (1) Հանրային միջոցների օպտիմալ բաշխում, (2) հանրային միջոցների օգտագործման համար արդյունավետ մոնիթորինգի իրականացում, (3) թափանցիկության աճ, (4) հանրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում:

12. ԹՎԱՅՆԱՑՈՒՄ | ԿՖԿՏՀ

12.1 Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) մշակում:

Նպատակ: Պետական հատվածի կազմակերպությունների ամբողջական ֆինանսական տեղեկատվության համախմբման և փոխադարձ ինտեգրման միջոցով Պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում:

Անմիջական արդյունք	Արդյունքային ցուցանիշ	Ժամկետներ
Պայմանագիր ծառայություն մատուցող կողմի հետ	ԿՖԿՏՀ-ի մշակման ծառայություն մատուցողն ընտրված է:	2025թ., 1-ին կիսամյակ
ԿՖԿՏՀ ներդրման ռազմավարություն և իրականացման պլան	ԿՖԿՏՀ-ի ներդրման ռազմավարությունը և իրականացման պլանը ներկայացված է ԿՖԿՏՀ-ի ծրագրային ապահովումը մշակող ընկերության կողմից և ընդունված է պատվիրատուի կողմից:	2025թ., 2-րդ կիսամյակ
Գործողության իրականացման հիմքեր	ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր: «2.3 Բարձր տեխնոլոգիաներ» ենթաբաժնի թվայնացում կետով սահմանված նպատակներ: ՀՀ ՖՆ 26.2 միջոցառում:	

Հիմնավորում: ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման գործընթաց՝ նպատակ հետապնդելով պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) հիմնական գործընթացների թվայնացման ճանապարհով բարձրացնել պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը, որակը և թափանցիկությունը, ՊՖԿ համակարգի հաշվետվողականությունը:

Համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն կընձեռվի պետական կառավարման բոլոր մակարդակներում լիովին ավտոմատացնել և ինտեգրել ՊՖԿ գործընթացները, արդյունքում. (1) բարձրացնել պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը, (2) բարելավել բյուջետային գործընթացները՝ ծրագրերի վրա հիմնված պետական բյուջեի կազմման միջոցով, (3) ամրապնդել ներքին հսկողությունը, (4) բարձրացնել ֆինանսական հաշվետվությունների որակը, մասնավորապես կառավարության ակտիվների և պարտավորությունների մասով, (5) բարելավել վճարումների ու գնումների գործընթացները և այլն:

ԿՖԿՏՀ-ն հնարավորություն կընձեռի պետական հատվածի բոլոր մակարդակներում արդյունավետ որոշումների կայացմանը, բարելավել ֆինանսական պլանավորման և կառավարման գործընթացները՝ տեղեկատվության և հաշվետվությունների ժամանակին գրանցման և ներկայացման միջոցով:

Պետական ֆինանսների կառավարման ակնկալվող արդյունքներ: Թվայնացումն ամբողջությամբ փոխակերպում է պետական ֆինանսների կառավարումը՝ դարձնելով այն ավելի արդյունավետ, թափանցիկ, հուսալի համակարգ և ապահովելով պետական կառավարման և հանրային ծառայությունների մատուցման ավելի լավ արդյունքներ: